# ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ՝ «ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄՆԵՐ. ՆՈՐ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԳԻՐՔ» ԹԵՄԱՅՈՎ

**21.06.2016 10:53**

***Հարգելի ՛ փաստաբաններ,***

Եթե Դուք հետաքրքրված եք Լոռու, Տավուշի կամ Սյունիքի մարզերում ընտրական գործընթացներով և ընտրությունների ժամանակ գործունեություն եք իրականացնելու նշված մարզերում, ապա կարող եք մասնակցել «Երիտասարդ գիտնականների և մտավորականների» հասարակական կազմակերպության (**այսուհետ՝ ՀԿ**) կողմից ս.թ. հունիսի 25-26–ը և հուլիսի 9-10-ը Դիլիջանի «Հաղարծին» հյուրանոցում կազմակերպվող սեմինարին (ընդհանուրը 12 ժամ)՝ **«Ընտրությունների նոր սահմանադրաիրավական կարգավորումներ. նոր ընտրական օրենսգիրք» թեմայով** ։

Սեմինարը վարելու է ՀՀ փաստաբանների պալատի դասընթացավար, փաստաբան Հայկ Ալումյանը: Մասնակիցների տեղափոխությունը Դիլիջանի «Հաղարծին» հյուրանոց իրականացվելու է ՀԿ-ի միջոցներով, իսկ այն անձինք, ովքեր կցանկանան տեղափոխվել իրենց միջոցներով ՀԿ-ից կստանան 4500 դրամ փոխհատուցում, որպես ճանապարհածախս:

Դասընթացի մասնակցության տեղերը սահմանափակ են, դասընթացին կարող է մասնակցել **ոչ ավել, քան 20 փաստաբան:**

***Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է մինչև 22.06.2016թ.-ը, ժամը 18:00 sargsyan@rambler.ru էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկել մասնակցությանն հայտ՝ կցելով ինքնակենսագրությունը (CV):***

Դասընթացին մասնակցելու հայտեր ներկայացրած անձանց ընտրությունը կկատարվի ՀԿ-ի կողմից:

***Լրացուցիչ տեղեկությունների համար կարող եք զանգահարել՝ 093-07-74-75 հեռախոսահամարով, կամ գրել sargsyan@rambler.ru էլ. հասցեով՝ փաստաբան Նվեր Սարգսյանին:***

*Հ.Գ. Դասընթացին մասնակցությունը յուրաքանչյուր փաստաբանի համար կհաշվարկվի վերապատրաստման 12 ժամ:*

**Բեռնել դասընթացի օրակարգը**

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })